Հաշվետվություն

Նարեկ Գրիգորյանի՝ 2017 թվականի հոկտեմբերի 1-3-ը Ավստրիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

Սույն թվականի հոկտեմբերի 1-3-ը Ավստրիայի Հանրապետության մայրաքաղաք Վիեննայում տեղի ունեցավ Եվրոգեոգրաֆիքս կազմակերպության 2017 թվականի Գլխավոր համաժողովը, որը կազմակերպվել էր Ավստրիայի Գեոդեզիայի և մետրոլոգիայի դաշնային ծառայության օգնությամբ: Միջոցառմանը մասնակցեցին Եվրոպայի կադաստրի վարման, գեոդեզիայի և քարտեզագրության լիազոր մարմինների ներկայացուցիչները:

Միջոցառմանը մասնակցեցին շուրջ 120 պատվիրակ 42 երկրից: Հայաստանի Հանրապետության պատվիրակներն էին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Նարեկ Գրիգորյանը և կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Արթուր Թովմասյանը: Միջոցառման ընթացքում քննարկվեցին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի իրավասությանը վերաբերող բազմաթիվ կարևորագույն հարցեր՝ կապված կադաստրի վարման, գեոդեզիայի, Երկրի հեռահար զոնդավորման, քարտեզագրման, հողային ռեգիստրի, տեղեկատվական տեխնոլոգիաների, տարածական տվյալների թափանցիկության, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքների զարգացման և այլ խնդիրների հետ:

Առանձնակի ուշադրության արժանացան ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, ավտոմատ տեխնիկական միջոցների (ռեֆերենցված սարքեր, անօդաչու թռչող սարքեր և այլն) կիրառման, ինչպես նաև տեխնոլոգիական նորարարությունների և դրանց՝ Եվրոգեոգրաֆիքս կազմակերպության անդամների վրա ազդեցության հարցերը: Կազմակերպվեցին կլոր սեղաններ, որի ընթացքում պատվիրակները ներկայացրեցին իրենց երկրում տեղի ունեցող զարգացումները վերը նշված ուղղություններով, ինչպես նաև քննարկվեցին թվային տեխնոլոգիաների համատեքստում գործող կառավարման և բիզնես մոդելներներ:

Քննարկումների առարկա դարձավ նաև աշխարհում լայն տարածում գտնող Block-chain տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները: Վրաստանի և Շվեդիայի պատվիրակները ներկայացրեցին իրենց երկրներում Block-chain տեխնոլոգիաների հատվածային կիրառման հաջող փորձը: Վրաստանի պատվիրակության հետ նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց առանձին հանդիպելու հողային ռեգիստրի գրառումների Block-chain տեխնոլոգիաների կիրառմամբ պահպանելու վրացական փորձի առավել մանրամասն ուսումնասիրության նպատակով:

Համաժողովի ընթացքում քննարկվեց նաև Գլոբալ գեոտարածական տեղեկատվության կառավարման հարցերով Միավորված Ազգերի Կազմակերպության փորձագետների կոմիտեի (UN-GGIM) կողմից կատարվող աշխատանքը և մարտահրավերները՝ մասնավորապես անդրադառնալով <<Օրակարգ 2030 և Կայուն Զարգացման Նպատակներ>>-ի շրջանակներում քննարկվող վիճակագրական նպատակներով գեոտարածական տվյալների կիրառման խնդիրներին:

Համաժողովի ընթացքում ընդունվեց Եվրոգեոգրաֆիքս կազմակերպության 2017 թվականի հաշվետվությունը, հաստատվեց 2017-2020 թվականների ռազմավարությունը և 2018 թվականի միջոցառումների ծրագիրը:

Եվրոգեոգրաֆիքս կազմակերպության Կառավարման խորհրդի անդամների տեղի ունեցած ընտրություններում հաղթեցին Իռլանդիայի և Իսպանիայի ներկայացուցիչները: